ՏԵՂԵԿԱՆՔ

Իրավական ակտերի նախագծերի հանրային քննարկման վերաբերյալ

Իրավական ակտի նախագծի անվանում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 29-Ի N 364-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

Իրավական ակտի նախագիծ մշակող մարմնի անվանում

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

Իրավական ակտի տեսակ

Որոշում

Ոլորտ

Սոցիալական ապահովություն

Հանրային քննարկման ժամկետ

09/10/2024 - 25/10/2024

Ստացված առաջարկների արդյունքներ

Ստացվել է 6 առաջարկ (կայքում առկա առաջարկներից)

Ամփոփվել է 6 առաջարկ

Քվեարկության արդյունքներ

1 կողմ

0 դեմ

Տեղեկանքը գեներացվել է www.e-draft.am կայքի կողմից

31/10/2024

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 29-Ի N 364-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

հ/հ	Առարկության, առաջարկության հեղինակը, ստացման ամսաթիվը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունը
	1	2	3	4
1	Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ 25.10.2024 22:05:14	Նախագծով նշվել և թվարկվել է, որ ապաստարանը պետք է հաստատի և իր գործունեության մեջ կիրառի հետևյալ փաստաթղթերը. ● գաղտնիության պահպանման համաձայնագրեր, ● անձնական տվյալների ստացման և մշակման համաձայնություն, ● ապաստարանում բնակության համաձայնագիր, ● շահառուին տրամադրվող օգնությունը ստանալու համաձայնագիր, ● շահառուի վստահելի անձանց հետ կապի հաստատման համար համաձայնագիր, ● դեղորայքից օգտվելու համաձայնագիր, ● շահառուի կողմից լրացվելու համար՝ ապաստարանից հեռանալու նշումների վերաբերյալ փաստաթուղթ:	Առաջարկը չի ընդունվել:	Ձևանմուշները սահմանելը կսահմանափակի ապաստարանի ազատությունը և այն պարբերաբար՝ ըստ պրակտիկայի փոփոխելու հնարավորությունը: Բացի այդ, թվարկված փաստաթղթերի մեծ մասի բովանդակությունն ինքնին բխում է օրենսդրությունից և Նախագծից:

		Առաջարկում ենք վերը թվարկված փաստաթղթերի ձևանմուշները կցել հավելվածին:		
2	Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ 25.10.2024 22:05:14	Ըստ նախագծի շահառուներն ապաստարանում տեղավորվում են ոչ ավելի, քան 12 ամսով: Անհրաժեշտ է նախատեսել սահմանված ժամկետը երկարաձգելու հնարավորություն, ինչպես նաև սպառիչ կերպով թվարկել այն փաստական հանգամանքները, որոնցով պայմանավորված հնարավոր կլինի երկարաձգել ապաստարանում գտնվելու ժամկետը (օրինակ՝ դատարանի որոշում, առողջական խնդիր, հղիություն, մինչև երեխայի մեկ տարեկան լրանալը, դատական գործի ձգձգում և այլն):	Առաջարկը չի ընդունվել:	«Սոցիալական աջակցության մասին» օրենքի 12-րդ հոդվածով է սահմանված այս ժամկետը: Ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց ապաստարանի գործունեությանը, մատուցվող ծառայություններին և անձնակազմին ներկայացվող պահանջները և ապաստարանի կողմից ծառայությունների մատուցման կարգը հաստատելու վերաբերյալ կառավարության որոշումը չի կարող սահմանել «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության

				մասին ՀՀ օրենքով (այսուհետ նաև՝ Օրենք) սահմանված ապաստարանում տեղավորման առավելագույն ժամկետը գերազանցող ժամկետ: Այսպես, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտը չպետք է հակասի հավասար կամ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտերին: Մինչդեռ, Օրենքի օրենքի 20-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ շահառուներն ապաստարանում տեղավորվում են ոչ ավելի, քան 12 ամսով:
3	Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի	Ըստ Նախագծի՝ ապաստարանի աշխատակիցը պետք է շահառուին ընդունելու պահից երկուսից երեք օրվա ընթացքում իրականացնի վերջինիս կարիքների և վտանգի	Առաջարկն ընդունվել է:	Ապաստարանի աշխատողների ցանկը և գնահատման ժամանակահատվածը

	գրասենյակ 25.10.2024 22:05:14	գրավոր գնահատումը: Տվյալ աշխատակիցը հանդիսանում է այդ գործի վարման պատասխանատուն: Առաջարկում ենք հստակեցնել, թե ապաստարանի ո՞ր աշխատակիցը (մասնագետը) պետք է ընդունի շահառուին և նախատեսել, որ ապատարանում շահառուի ընդունելության ժամանակ ներկա գտնվի հոգեբանը: Կազմակերպությունն առաջարկում է նաև վտանգի գրավոր գնահատումը իրականացնել ոչ թե ընդունելու պահից երկուսից երեք օրվա ընթացքում, այլ ընդունելության պահից մեկից երեք օրվա ընթացքում:		կվերախմբագրվի:
4	Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ 25.10.2024 22:05:14	Նախագծում որպես ապաստարանի գործունեության սկզբունքներ նշվել է՝ 1. անվտանգության և պաշտպանության ապահովման առաջնայնություն, 2. խտրականության բացառում, 3. տեղեկացված լինելու իրավունքի երաշխավորում, 4. մասնավոր և ընտանեկան կյանքի վերաբերյալ տեղեկությունների անձեռնմխելիություն, 5. արժանապատվության, անձնական կյանքի, ինքնուրույնության, ազատ ընտրության և անկախության նկատմամբ հարգանքը, 6. երեխայի լավագույն շահերի առաջնահերթություն, 7. շահառուների	Առաջարկն ընդունվել է մասնակի	Նախագծում նախատեսված սկզբունքների շարադրանքը և բովանդակությունը կվերանայվի ըստ նպատակայնության՝ ավելացվելով այն սկզբունքները, որոնք սույն նախագծում նախապես ներառված չեն եղել:

		աշխատելու և կրթություն ստանալու իրավունքի նկատմամբ հարգանքը, 8. իրավահավասարություն, մատչելիություն և ներառականություն: Առաջարկում ենք ապաստարանի գործունեության սկզբունքները շարադրել հետևյալ բովանդակությամբ" 1. հարգանքի և արժանապտավության երաշխավորում, 2. գաղտնիություն և անձնական տվյալների պաշտպանություն, 3. երեխայի լավագույն շահի պաշտպանություն, 4. ներառականություն և խտրականության արգելք, 5. տեղեկացված լինելու իրավունքի ապահովում, 6. մասնավոր և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքի ապահովում, 7. ինքնուրույնության իրավունքի ապահովում, 8. մարդու իրավունքների վրա հիմնված աջակցության տրամադրում, 9. գենդերազգայուն ծառայությունների տրամադրում, 10. շահառուների աշխատանքի և կրթության իրավունքի ապահովում:		
5	Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ	ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համաձայն՝ մեղադրյալ է այն անձը, ում նկատմամբ հարուցվել է քրեական հետապնդում, և ում նկատմամբ միաժամանակ առկա չէ օրինական ուժի մեջ մտած քրեական	Առաջարկը չի ընդունվել:	ՀՀ օրենսդրության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նշված սկզբունքը որդեգրվել է մի շարք պաշտոնների և

	25.10.2024 22:05:14	հետապնդումը դադարեցնելու մասին որոշում կամ մեղադրական կամ արդարացման դատավճիռ, իսկ քրեական հետապնդման հարուցում է համարվում՝ դատախազի կողմից անձի ենթադրյալ հանցավոր արարքը նկարագրող և դրա իրավական գնահատականը պարունակող որոշում կայացնելը կամ ենթադրյալ տուժողի կողմից դատարան քրեական հայց ներկայացնելը. ՀՀ քրեական դատավարության 17-րդ հոդվածի համաձայն՝ 1. Հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ սույն օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով: 2. Չապացուցված մեղավորությունը հավասարազոր է ապացուցված անմեղությանը: «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն հանրային ծառայության ընդունվելու իրավունք չունի այն անձը, ով 1) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ. 2) դատական կարգով զրկվել է հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունքից. 3) տառապում է այնպիսի հիվանդությամբ, որը հանրային ծառայության տվյալ պաշտոնի նշանակվելու դեպքում կարող է խոչընդոտել իր լիազորությունների		աշխատանքների դեպքում: Ավելին, միջազգային փորձից ևս բխում է, որ ապաստարանների աշխատակիցներ չեն կարող լինել այն անձինք, ում նկատմամբ հարուցվել է քրեական հետապնդում: «Հանրային ծառայության մասին» օրենքի պահանջները ապաստարանի աշխատակիցների վրա տարածելը որևէ հիմնավորում չունի և չի բխում այս ոլորտի հատուկ կարիքներից: Բացի այդ, քրեական հետապնդում հարուցված լինելը բացառում է միայն այդ պահին աշխատակից հանդիսանալը և չի բացառում նշված անձանց հետագա աշխատանքը:

Գործունեության տեսակը՝ որ անելիք, որ վիճակում: <չափաբաժնի ամսաթիվ օրենսդրքի հասցեներ՝ կանոնակարգի ամսաթիվ և դրությունով ամսաթիվ ամսաթվի ամսաթվի օրենսդրական տեղեկություն	Սոցաշխատողը չի ընդունվել:	Հանձնարարության ցանկացած դեպքում Է դրությունը հասցեագրվում է հանձնարարության կատարողին՝ նրան տրամադրելու նպատակով: Հանձնարարությունը կատարելիս պետք է հաշվի առնվեն հանձնարարության բովանդակությունը, դրա կատարման ժամկետները, ինչպես նաև գործող օրենսդրական դրույթները: Հանձնարարությունը կարող է տրվել գրավոր կամ բանավոր: Գրավոր հանձնարարությունը ստանալուց հետո աշխատակիցը պարտավոր է հաստատել դրա ստացումը: Բանավոր հանձնարարությունը ստանալուց հետո աշխատակիցը պարտավոր է հաստատել դրա ստացումը՝ ստորագրելով հանձնարարության մասին գրառումը: Հանձնարարությունը ստանալուց հետո աշխատակիցը պարտավոր է ստուգել դրա բովանդակությունը: Եթե հանձնարարությունը հակասում է գործող օրենսդրությանը, աշխատակիցը պարտավոր է տեղեկացնել ղեկավարին: Հանձնարարությունը չի կարող կատարվել, եթե դրանում կան սխալներ կամ անհասկանալի տեղեկություններ: Հանձնարարությունը կատարելիս աշխատակիցը պարտավոր է հետևել դրա բովանդակությանը: Հանձնարարությունը կատարելուց հետո աշխատակիցը պարտավոր է տեղեկացնել ղեկավարին: Հանձնարարությունը կատարելուց հետո աշխատակիցը պարտավոր է ներկայացնել զեկուցագիր: Զեկուցագիրը պետք է պարունակի հանձնարարության բովանդակությունը, կատարման ամսաթիվը, կատարողի անունը, ազգանունը, հայրանունը, ինչպես նաև կատարման արդյունքները: Զեկուցագիրը պետք է ստորագրվի աշխատակցի կողմից: Զեկուցագիրը պետք է գրանցվի գրանցման մատյանում: Զեկուցագիրը պետք է ներկայացվի ղեկավարին: Զեկուցագիրը ստանալուց հետո ղեկավարը պարտավոր է հաստատել դրա ստացումը: Զեկուցագիրը ստանալուց հետո ղեկավարը պարտավոր է ստուգել դրա բովանդակությունը: Եթե զեկուցագիրը հակասում է գործող օրենսդրությանը, ղեկավարը պարտավոր է տեղեկացնել աշխատակցին: Զեկուցագիրը չի կարող կատարվել, եթե դրանում կան սխալներ կամ անհասկանալի տեղեկություններ: Զեկուցագիրը կատարելիս աշխատակիցը պարտավոր է հետևել դրա բովանդակությանը: Զեկուցագիրը կատարելուց հետո աշխատակիցը պարտավոր է տեղեկացնել ղեկավարին: Զեկուցագիր

		Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիային : ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համաձայն՝ անձը կարող է ճանաչվել անգործունակ ՝ զրկվելով իր հիմնարար իրավունքների իրացման հնարավորությունից, մինչդեռ Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի 12-րդ հոդվածը սահմանում է հաշմանդամություն ունեցող անձանց՝ մյուսների հետ հավասար հիմունքներով գործունակության իրավունքը՝ կյանքի բոլոր ոլորտներում: Հոգեկան առողջության ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրությունը պետք է համահունչ լինի մարդու իրավունքների հիմնարար սկզբունքներին, նպաստի անձի արժանապատվության նկատմամբ հարգանքը բարձրացնելուն և հոգեկան առողջության հիմքով առկա խտրական սահմանափակումները վերացնելուն: ՀՀ Սահմանադրական դատարանն՝ 2015 թվականին ընդունած իր ՍԴՈ-1197 որոշմամբ, անդրադառնալով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում կիրառվող «գործունակություն», «անգործունակություն» և «սահմանափակ գործունակություն» հասկացություններին, հղում է կատարել Մարդու իրավունքների եվրոպական		նախատեսում է գործունակության իրավունքի սահմանափակում որոշ դեպքերում, իսկ ապաստարանում աշխատելը ենթադրում է նաև որոշումների կայացման պատասխանատվության շրջանակ, գործունակությունը կարող է կարևոր լինել այդ աշխատանքներն իրագործելու համար: Ընդ որում, բարձրացված հարցերի հասցեագրումը նախևառաջ ենթադրում է առնվազն գործունակության սահմանափակման միջանկյալ ձևերի սահմանում ՀՀ քաղաքացիական օրենսդրության շրջանակներում, ինչը հնարավորություն կտա համաչափ մոտեցում ցուցաբերել անձի կողմից

		դատարանի՝ Շտուկատուրովն ընդդեմ Ռուսաստանի գործով կայացված վճռին: Մասնավորապես, նշված վճռով սահմանվել է, որ «անձին անգործունակ ճանաչելը հանդիսանում է վերջինիս անձնական կյանքը հարգելու իրավունքին միջամտություն: Շտուկատուրովի մոտ բժիշկների կողմից արձանագրվել էին որոշակի հոգեկան հիվանդություններ, սակայն, ըստ դատարանի, վերջինիս անգործունակ ճանաչելն անհամաչափ էր հետապնդվող իրավաչափ նպատակին: Դատարանի կողմից արձանագրվել էր նաև Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ գործունակության և անգործունակության միջև միջանկյալ, այլընտրանքային (բացառությամբ՝ ոգելից խմիչքների կամ թմրամիջոցների չարաշահման հակում ունեցողների) տարբերակի բացակայությունը՝ հաշվի առնելով այն տրամաբանությունը, որ ոչ բոլոր հոգեկան հիվանդություններն (խմբ"հեղինակի կողմից) են հանգեցնում անձի ամբողջական անգործունակությանը» : Վերը նշված դիրքորոշումները հաշվի առնելով՝ առաջարկում ենք նախագծի աշխատակազմին ներկայացվող պահանջների ցանկից հանել «ով դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչված է անգործունակ, կամ սահմանափակ գործունակ»		կյանքի տարբեր ոլորտներում իր իրավունքների սահմանափակման նկատմամբ:

		կետը:		